

անեցաւ որ Սթէնի պաշտօնարանը շարունակել իւր գործունէութիւնն, եւ քուն պատճառը՝ նորոնգեան չիպատոռները դնելու խնդիրն՝ առ այժմ՝ յետաձգուի:

Գալ ամառն մէջ մեծ նաւական համադիտութիւնը պիտի ըլլան ի Գեներալ, ուր պէտի երթայ իտալիոյ թագաւորն եւ թագուհին, եւ ուր ներկայ պիտի ըլլայ իտալական ամբողջ աորմըրը: Այս համադիտին մասնակցին պիտի նաեւ միւս տէրութեանց նաւատորմիւնքն, ի մասնաւորի Աւստրիա, Գերմանիա, Սպանիա եւն, թայց մասնաւոր Գաղղիա՝ որ այսու փոխարէն մ'ըրած կ'ըլլայ իտալիոյ, որ իտալական նաւախումք մը խաւրած էր յողջոյն Բառնոյի ի թուրքն, նախագահին սպանութեան գացած ժամանակ:

Գաղղիոյ մէջ կատարուեցան լմնցան քաղաքաքաշական եւ ընդհանրական խորրդարանաց ընտրութիւնք, որոնց մէջ հասարակականականը շատ մեծ թուով մեծամասնութիւն մ'ունեցան: — Գաղղիացոց Տառմէի դէմ՝ ձեռնարկած կոխն սկսաւ գործադրուիլ, քստ որում՝ ծովագերբն պաշարման վիճակի մէջ դրուեցաւ նախ, եւ ապա շատ տեղեր ոմքակոծուեցան: Թէեւ ցամաքի կողմանէ արշաւող խումք մը մեծ յաջողութիւն չգտաւ, թայց այժմ՝ մեծ գունդ մը կը պատրաստուի խտտութեամբ յառաջ վարել պատերազմի: — Միւս կողմանէ Գաղղիոյ եւ Անկախ Բոնկոյի մէջ խնդիր մը ծագեցաւ նոյն Անկախ տէրութեան եւ Գաղղիոյ նոյն մասին գաղթականութեան սահմանաց մտեղը Բոնկոյ գետին քով Գաղղիացոց սպանուելով, որուն համար Գաղղիա նաւուցում կ'ուզէ, եւ միւս կողմանէ նոյն սահմանները ճշդելու վէժ մը կայ: Խնդիրն առ այժմ՝ որոշուած չէ:

Ժամեր վտանգ մը կը սպառնայ յիշեալ Բոնկոյի Անկախ Տէրութեան, որ Գաղղիոյ օգնութեամբ չիմուեցաւ եւ որուն վրայ Գաղղիա ի հարկին գնելու առաջնութեան իրաւունքն ունի: Սոյն տէրութիւնն անձնական կապով կապուած է Բեռլինոյ թագաւորին հետ, որ իւր ստացուածոց մեծ մասն տուաւ նոյն տէրու-

թեան ծախքերուն համար. նաեւ քեղդական Լաւաւարտութիւնն իրր 30 միլիոն ֆրանք ծախք ըրաւ այսպատճառաւ: Բայց Բոնկոյ աւտր հակառակ ամենեւին մուտք չի բերեր. իսկ վերջերս նաեւ ծանր վտանգի մէջ էնկաւ: Ըստ նորագոյն լրաց գերեկամաւոր քաղաքական գունդ կազմած խոռվութիւն յարուցին, եւ հակադերեկարական մեծ արշաւախումք մը փժացուցին. Բարուքայի հարաւարեւմտեան կողմն Բոնկոյի տէրութեան գնդերը ոչնչացան, եւ շատ երուպացի սպանուեցան: Կր վակացիոյ որ գերեկամաւոր շատ գործուն: — Նման օակաղութիւն կընցին նաեւ Գերմանացիք ի Բիլիմանմարոյ: — Մօտերս մեծ մուտրութիւն գրաւցին Աֆրիկա-տանէն եկած լրերը, ուր այլեւայլ ցեղեր խոռվութեան մէջն են. ոռուական երեք զօրաքաժիկք ալ Փամիր արշաւելու սկսած են՝ կ'ըստի:



ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՌՈՒՄԵՆԱԿԱՆ

ՄԱՏՆԵԱԳՐԱՅԱՆ — Խոտրովիկ եւ Գից Ներձուածոց. 257:

ՊԱՏՄԵՅԱՆ — Դրանսիոյանիոյ Շոխսաքեթուպոլիս քաղքին սկզբնաւորութիւնը, արտօմութիւններն ու արքունի կալուածոց վաճառումը. 263:

ՀԱՆՈՍՄԱԿԱՆ — Նախահայ եւ Երբայեցիք. 268:

ԳՐԱԿԱՆ — Ամանային ուղեւորութիւնից դէպ ի Հայս. 268: — Ազգային Հրատարակութիւն 1891 ամի. 272: — Ցուցակ հայերէն ձեռագրաց մասնազարանին վատկանու ի հոռվմ. 273:

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ — Օրուան խնդիրը. 275:

ՄԱՏՆԱԿՈՍՄԱԿԱՆ — Միմին Գարամաճեան, Նոր Բաղադից հայերէն լեզուի. 277:

ՃՐՈՒԵՍԳՐԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒՄՍԱԿԱՆ — Շրջապայութիւն Նկարաց աշխարհն մէջ. 280: — Տղազրութեան գիւղը. 282:

ՈՍԵԻԵՍԵԻ

ՆՈՐԱՂՈՐԲ — Նոր գիւտ մը. 286: — Ստորերկրայ թէւատոն մը. 286:

ՏՆՏԵՍԱԿԱՆ — Իծի իսածուածքին դէպ դիւրին միջոց մը. 287: — Մագի իմաստը. 287:

ՄԱՆՐԱՂՈՐԲ — Լոնտոն. 287:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 287:



ՀՐԱՏԱՆԱԿԻԶ ԵՆ ՊԱՏՄՈՒՄՆԱՍՈՒ ՆՈՐԱԳԻՐ

Հ. ԲԱՓԱՅԵԼ Վ. ՊԱՐՈՆԶ

Վ. Ի. Ե. Ն. Ե. Մ. Ի. Բ. Ո. Բ. Ն. Զ. Գ. Ր. Ն.